Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
փետրվարի 13-ի N 195-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ՈՐԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակող մասնագիտական հանձնաժողովի գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով:

3. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

4. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելը.

2) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակումը մերժելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելը.

3) որպես գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներ որակված աշխատանքների որակումը դադարեցնելու կամ չեղյալ ճանաչելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելը:

5. Հանձնաժողովի գործառույթների մեջ չեն մտնում սույն որոշման N 4 հավելվածի 3-րդ կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտների (ռազմարդյունաբերական համալիրի ամփոփ ցուցակում (ռեեստրում) գրանցված) կողմից Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական

և գիտատեխնիկական խորհրդին ներկայացված գիտական հետազոտություն-ների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելը կամ որակումը դադարեցնելը կամ մերժելը:

6. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնա-ժողովի նախագահի հրավերով կամ հանձնաժողովի որոշմամբ խորհրդակցական ձայնի իրավունքով հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել հանձնաժողովի անդամ չհանդիսացող անձինք:

7. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձ-նաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը:

8. Հանձնաժողովը տրամադրում է՝

1) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխա-տանքները որպես այդպիսին որակելու վերաբերյալ եզրակացություն.

2) որպես գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ որակված աշխատանքների որակումը դադարեցնելու կամ չեղյալ ճանաչելու վերաբերյալ եզրակացություն.

3) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխա-տանքները որպես այդպիսին որակումը մերժելու վերաբերյալ եզրակացություն:

9. Հանձնաժողովն ընդունում է՝

1) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխա-տանքները որպես այդպիսին որակելու մասին հայտի քննարկումը կասեցնելու վերաբերյալ որոշում.

2) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ որոշում.

3) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների ծրագրում փոփոխությունների կամ լրացումների կատարումը մերժելու վերաբերյալ որոշում.

4) հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ որոշումներ:

10. Հանձնաժողովի որոշումները և եզրակացություններն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության

դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ հանձնաժողովի նախագահի փոխարինման դեպքում՝ հանձնաժողովի նախագահին փոխարինողի ձայնը վճռորոշ է: Հանձնաժողովի անդամի պահանջի դեպքում ընդունված եզրակացության կամ որոշման մասին նրա առարկությունը կամ վերապահումը պետք է արտացոլվի հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ:

11. Հանձնաժողովի եզրակացությունները հաստատվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից:

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում և ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը, ապահովում հանձնաժողովի բնականոն աշխատանքը.

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը.

3) վարում է հանձնաժողովի նիստերը.

4) ստորագրում է հանձնաժողովի արձանագրությունները, եզրակացությունները կամ որոշումները:

13. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

14. Հանձնաժողովի ընթացիկ աշխատանքները կազմակերպում է հանձնաժողովի քարտուղարությունը (այսուհետ՝ քարտուղարություն): Քարտուղարության գործառույթներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) աշխատակազմի կողմից:

15. Քարտուղարությունը՝

1) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեության կազմակերպումը.

2) վարում է հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

3) ձևավորում է հանձնաժողովի նիստի օրակարգը, հանձնաժողովի նիստից առնվազն 5 աշխատանքային օր առաջ այդ մասին ծանուցում սույն որոշման N 1 հավելվածով սահմանված գերատեսչություններին.

4) հրավիրում է հանձնաժողովի նիստերը.

5) կազմակերպում է հայտերի հավաքագրումն ու դրանց ներկայացման համար սահմանված ձևաչափին համապատասխանության ստուգումը.

6) ըստ անհրաժեշտության հարցումներ է կատարում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե.

7) սահմանված ձևաչափին չհամապատասխանող հայտերը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում հետ է վերադարձնում ներկայացնողին (կրկին ներկայացված և ձևաչափին չհամապատասխանող հայտը չի ներառվում հանձնաժողովի նիստի օրակարգ և ենթակա չէ հետագա ուսումնասիրման).

8) նույնականացնում է նիստին ներկա հանձնաժողովի անդամներին, ապահովում է վերջիններիս կողմից համապատասխան գաղտնիության համաձայնագրերի ստորագրումը և հայտարարում նիստի իրավազորության մասին.

9) կազմակերպում է հանձնաժողովի որոշումների քվեարկությունները, ամփոփում և հայտարարում քվեարկության արդյունքները.

10) հայտատուին և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե է ուղարկում հանձնաժողովի եզրակացությունն ու այն հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը.

11) արձանագրում է հանձնաժողովի նիստի քննարկումները և դրանց հիման վրա կազմում որոշումների և եզրակացությունների նախագծերը:

16. Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը և օրակարգում ներառված հարցերին վերաբերող նյութերը հանձնաժողովի անդամներին են ներկայացվում «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով կամ էլեկտրոնային ծանուցման եղանակով հանձնաժողովի նիստից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

17. Հանձնաժողովում անդամի կարգավիճակ ունեցող յուրաքանչյուր պետական մարմին հանձնաժողովի նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով կամ էլեկտրոնային ծանուցման եղանակով քարտուղարություն է ներկայացնում հանձնաժողովի՝

իր կողմից լիազորված ներկայացուցչի (ներկայացուցիչների) անունը, ազգանունը, պաշտոնը, աշխատանքային հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

18. Հանձնաժողովին կից գործում են ենթահանձնաժողովներ, որոնք իրականացնում են հանձնաժողովին մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու գործառույթներ, այդ թվում՝ ներկայացնելով գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները սույն որոշման N 2 հավելվածով սահմանված չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ դիրքորոշում:

19. Հանձնաժողովում հայտերը քննարկվում են համապատասխան ծրագրի վերաբերյալ ենթահանձնաժողովի կողմից տրամադրված դիրքորոշման (այդ թվում՝ գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները սույն որոշման N 2 հավելվածով սահմանված չափանիշներին համապատասխանելու վերաբերյալ) առկայության դեպքում: Դիրքորոշումը ենթահանձնաժողովի կողմից հանձնաժողովին է տրամադրվում հանձնաժողովի նիստից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

20. Հանձնաժողովին կից գործում են հետևյալ հինգ ենթահանձնաժողովները՝

1) բնական գիտությունների.

2) ճարտարագիտություն և տեխնոլոգիայի.

3) բժշկական գիտությունների.

4) գյուղատնտեսական գիտությունների.

5) հասարակական և հումանիտար գիտությունների:

21. Ենթահանձնաժողովները բաղկացած են 5 անդամից:

22. Ենթահանձնաժողովների նախագահներին նշանակում է կոմիտեի նախագահը՝ հանձնաժողովի համաձայնությամբ:

23. Ենթահանձնաժողովների անդամներին նշանակում է կոմիտեի նախագահը:

24. Ենթահանձնաժողովների կազմը և աշխատակարգը հաստատում է կոմիտեի նախագահը:

25. Ենթահանձնաժողովների անդամները համալրվում են գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի գիտնականներով, բարձր որակավորում ունեցող մասնագետներով:

26. Ենթահանձնաժողովների աշխատանքում անհրաժեշտության դեպքում՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, ժամանակավորապես ներգրավվում են տարբեր գերատեսչությունների, հիմնարկների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական կազմակերպությունների և արտադրության համապատասխան մասնագետներ (համաձայնությամբ):

27. Ենթահանձնաժողովների վարձատրությունն իրականացվում է կոմիտեի կողմից փորձագետներ ներգրավվելու նպատակով կոմիտեին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում օրենսդրությամբ սահմանված կարգով:

28. Ենթահանձնաժողովների նախագահները մասնակցում են հանձնաժողովի նիստերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ